Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Պ-1370[4]-03.07.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 3-րդ մասը «դիվանագիտական ծառայությունը,» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը,» բառերով:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Պետական ծառայության պաշտոն, համայնքային ծառայության պաշտոն, պետական վարչական պաշտոն, համայնքային վարչական պաշտոն, պետական հայեցողական պաշտոն, համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը դատապարտվել է ընտրակաշառք ստանալու, կամ ընտրակաշառք տալու, կամ ընտրակաշառքի միջնորդության, կամ հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելու համար՝ անկախ դատվածությունը մարված կամ վերացված լինելու հանգամանքից:».

2) 2-րդ մասի «1-ին մասով» բառերը փոխարինել «1-ին և 1.1-ին մասերով» բառերով

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1370-17.06.2026,01.07.2026-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Ղազարյան	Նախագծի 3-6-րդ հոդվածներ	Առաջարկվում է նախագծի 3-6-րդ հոդվածներում «հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն» բառերը փոխարինել «պետական քաղաքական պաշտոն, համայնքային քաղաքական պաշտոն, ինքնավար պաշտոն» բառերով	Ընդունվել է	**Ընդունվել է**
2.	Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Ղազարյան	Նախագիծ	Առաջարկվում է նախագիծը լրացնել ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», ««Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը	Ընդունվել է	**Ընդունվել է**